ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Էջմիածնում շուտով տեղի է ունենալու հայ գրերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանի փակման հանդէսը։

Քանի որ այդ տօնը մեր հոգու, մտքի և քաղաքակրթութեան տօնն է, ցանկալի էր, որ այդ հանդէսին աւելի ճոխ ընտրութիւն և լայն ժողովրդականութիւն տրվի։

Օրթոդոքսական յանձնաժողովը չը պիտի բաւականանայ նրանով, որ կը լինեն զանազան քաղաքների և գիւղերի հայ հասարակութիւնների, ընկերութիւնների և հիմնարկութիւնների կողմից պատահական ներկայացուցիչներ։ Նա պիտի աշխատի ունենալ պաշտօնական ներկայացուցիչներ այն բոլոր հիմնարկութիւններից, որոնք գտնվում են Էջմիածնի տեսչութեան տակ։

Այդ հանդէսը իբրև մի զուտ կուլտուրական հանդէս պիտի գրաւի մեր բոլոր կրթական հաստատութիւնների թէ հոգաբարձական մարմինների, թէ ուսուցչական խմբերի և թէ աշակերտութեան պաշտօնական ներկայացուցիչներ, որոնք գալով երկրի զանազան կողմերից՝ այդ օրը պիտի ապրեն միևնոյն ոգով և զգացումներով։

Պիտի հնարաւորութիւն տալ մանուկ սերընդին խիտ շրջան կազմելու այն մարդու շիրիմի շուրջը, որը նրանց մտացանում և խօսեցնում է ներկայումս ու պատրաստում ապագայի համար։

Մեր մատաղ սերնդի այսպիսի մանակցութիւնը կունենայ իր օգտակար ազդեցութիւնն ու նրան կը կապէ իր ազգի անցեալի հետ, զարթեցնելով նրա մէջ սէր դէպի ամեն մի կուլտուրական ձեռնարկութիւն և կը պատրաստէ նրանից լաւ մարդիկ և լաւ ազգասէրներ։

Ռուբէն Տէր-Գրիգորեան

Դերբենտ